



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

«Հ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hwaugt abovyan.kotayq@mta.gov.am

28-ը հունվարի 2023թ.

Ուղերձ հունվարի 28-ի՝ Բանակի օրվա առիթով

Մեր անկախ պետականության ամենից արժեքավոր ձեռքբերումը երիտասարդ, բայց և փորձառու հայոց բանակն է, որի կազմավորման 31-րդ տարեդարձն է այսօր: Ազնիվ, խաղաղասեր, իսկ վտանգի պահին նվիրյալ ու խիզախ կռվող մարտիկների հավաքական կերպար է հայոց բանակը, որը կերտել է անձնվեր սխրագործությունների և փառահեղ հաղթանակների պատմություններով հարուստ մարտական ուղի: Բանակի կազմավորման շրջանում բարդ ու հաղթական դրվագների մասնակիցը լինելով՝ վստահաբար փաստում եմ, որ անկորտում է հայի կամքն ու ազատատենչ ոգին: Մինևույն ժամանակ, ամիսսանքով պիտի նշենք, որ բազում փորձությունների ու սաղրանքների բովով անցած հայոց բանակին չեն շրջանցել նաև պարտություններն ու անդառնալի կորուստները: Առաջին հերթին ուզում եմ խոնարհումով հիշենք մեր զոհված հայորդիներին, հարգենք և վառ պահենք նրանց անմար հիշատակը:

Հայ ժողովուրդն ապրում է մարտահրավերներով լի, անկայուն ժամանակներ և հայրենիքի անվտանգության հարցում մեծապես շարունակում ապավինել մեր վիրավոր, բայց չվհատվող բանակի արիությանն ու մարտունակությանը:

Միբելի՝ հայրենակիցներ, աշխարհասփյուռ հայություն.

Հայկական բանակի օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիս, քանզի բանակն ազգային արժեք է, որում ավելի քան երեք տասնամյակ կարևոր ու թանկ ներդրում ունի յուրաքանչյուր հայ ընտանիք, որին հպարտության, տխրության ու երախտիքի զգացումներով կապված է յուրաքանչյուր հայ:

Հայկական բանակի հարգարժան ներկայացուցիչներ, սպաներ և զինվորներ.

Բանակի 31-րդ տարեդարձի և մասնագիտական տոնի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում՝ քաջառողջություն, զգոնություն, բազկի, ոգու անհատնում ուժ, և որ ամենակարևորն է, անվտանգ ու անկորուստ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ